

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԱՐՈ ՂԱՖԱԴԱՐՅԱՆ, ՀՈՎՀԱՆՆԱՎԱՆՔԸ ԵՎ ՆՐԱ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակություն, Երևան 1948 թ. 121 էջ:



այկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հայկական Պետական Պատմական Բանագրանիշի ղեկավարությունը նպատակ է դրեւ հրատարակել Հայկական ճարտարապետության պատմության համար մեծ արժեք ներկայացնող հուշարձանների մասին գիտա-հանրամատչելի սերիայով գրքույնների մի շաբթ Աշխատություններ պիտի գրվեն Սաղմոսավանքի, Հաղպատի, Մանանի, Խորանազատի, Մակարավանքի, Նոր-Վարագավանքի և կարմոր այլ հուշարձանների մասին: Մատենաշարքը բացվում է պատմական գիտությունների թեկնածու Կառո Ղափադարյանի «Հովհաննավանքը և նրա արձանագրությունները» կրող ներկա ուսումնասիրությամբ:

Աշխատությունը բաժանվում է երկու մասի՝ ուսումնասիրություն և վիմական արձանագրություններ: Առաջին մասը վերնագրված է՝ «Հովհաննավանքի ճարտարապետական կառուցվածքները», իսկ երկրորդ մասը՝ «Հովհաննավանքի վիմական արձանագրությունները»: Աշխատությունը սկզբից ունի առաջարան, իսկ վերջում անունների ցանկ:

Գիտությունների թեկնածու Կ. Ղափադարյանն իր ուսումնասիրությունը սկսել է Հովհաննավանքի ամենահին հուշարձանից՝ բազիլիկ եկեղեցուց: Հեղինակը համաձայնվում է ճարտարապետության թ. Թորամանյանի հետ, որ բազիլիկ այդ եկեղեցին ռապտկանում է գրիստոնեական ճարտարապետության

գարգացման առաջին շրջանին, այսինքն՝ շորորդ կամ հինգերորդ դարերին: Հեղինակը սակայն, համակարծիք չէ Թորամանյանի հետ՝ որ եկեղեցին սկզբից և եթ քարածածկ է եղել: Նա գտնում է, որ եկեղեցին նորոգվել և քարով է ծածկվել՝ 550-ական թվերին՝ Աշոտ Դիմենցի վանահոր ժամանակ, որի մասին տեղեկություն է պահվել մի հիշատակարանում, որից քաղել և հիշում է Զաքարիա Սարկավագը: Հովհաննավանքի բազիլիկ եկեղեցու մասին մատենագրական հնագույն տեղեկություններ են հաղորդված Շիրօք թղթոց»-ում և Ուխտանիսի պատմության մեջ: Եկեղեցին մի շաբթ անդամներ նորոգվել է՝ 6-րդ, 17-րդ և 18-րդ դարերում: Վերջին անդամ տաճարի արևելյան պատի հարավային անկյունը նորոգել է Հայկ. ՍՍՌ Պատմական Հուշարձանների Պահպանության Կոմիտեն 1946 թվականին:

Ուսումնասիրության բաժնի հաջորդ հնագույն վիրոված է բազիլիկ եկեղեցու հարավային կողմից կից շինված Կաթողիկե եկեղեցուն: Հեղինակի կարծիքով, Կաթողիկե եկեղեցու կառուցումը սկսվել է ՈԿԵ (1216) թվականին և ավարտվել ՈՀ (1221) թվականին: Տվյալ դեպքում նա ենում է տաճարի վրա փորագրված վիմական արձանագրություններից: Միաւ է համարում Զաքարիա Սարկավագի տված տաճարի ավարտման ՈԿԶ (127) թվականը: Եկեղեցին 1669 թվին մեծ երկրաշարժի ժամանակ տուժել է, ճեղքեր է տվել, որը սակայն վերակառուցվել է Սարգիս Կարրեցու առաջնորդության ժամանակ:

Նըրուրդ ենթագովկը և միջրաված է Կաթողիկէ եկեղեցու ժամատանը: Հեղինակի կարծիքով, ժամատոնը կառուցել է Վակեի որդի Քուրդ իշխանը 1250 թվին: Նրա եղբակացության համար հիմք է ծառայել ժամատան հյուսիսային պատի վրա փորագրված հետևյալ արձանագրությունը. «Եղաք սկիզբն մեծափառ տանս և բազում արդիամք հատուցագի կատարած: Արձանագրությունը փորագրված է 1250 թվականին»:

Ենք համարում բերել այս ենթագլխի մասին
Հեղինակի եզրակացությունները:

1. Հովհաննավանքը սկսած 5-րդ դարից
Հայաստանի նշանավոր վանքերից մեկն է
եղել, որտեղ հավանաբար Ղազար Փարպե-
ցին իր վանահայրության ժամանակ գրել է
«Հայոց պատմությունը»:

2. 7-րդ դարում, Ուկտանիս եպիսկոպոսի
և Թղթոց գրքի տեղեկությունների համաձայն,
Հովհաննավանքը հանդես է գալիս իրուն



Հովհաննավաճեմի Եկեղեցին

Չորրորդ և հինգերորդ գլուխներում հեղինակը կանգ է առել ժամատան հյուսիսակողմյան կից շինության և մյուս շինությունների վրա:

Ուսումնասիրության վերջին ենթագլուխը
վերնագրաված է՝ «Հովհաննավանքը պատ-
մության մեջ»։ Այսուեղ հեղինակը վիմագիր
և ձեռագիր տեղեկությունների հիման վրա
աշխատում է կազմել Հովհաննավանքի պատ-
մության համառոտ ուրվագիծը։ Անհրաժեշտ

կաղևոր կենտրոն, որ մեծ կշիռ է ունեցել
ժամանակի դավանաբանական վեճերի, ինչ-
պես նաև Հայաստանի քաղաքական հարցե-
րում:

3. 13-րդ դարում Հռվիշաննավանքը շենացել է ճարտարապետական խոշոր կառուցումներով և դարձել է Արագածոտնի կաթողիկոպսական կենտրոն և Վաշոտյանց տանտոհմական վանքը:

4. 15-րդ դարում հայոց կաթողիկոսով լու-

և էջմիածնում վերահստատելու միջոցին Հովհաննավանքը խաղացել է ամենակառող դերերից մեկը, որի համար էլ 1441 թվին հաստատված Կիրակոս Վիրապեցին Հովհաննավանքի առաջնորդին շնորհում է էջմիածնի աթոռակալության պատիվը, որը սակայն վերանում է շուտով կաթողիկոսի դեմ կազմակերպված դավադրությամբ:

5. Հովհաննավանքն իր ծաղկման բարձր աստիճանին է հասնում 17-րդ դարում, երբ ընդհանուր առմամբ հայ հասարակական կյանքը խոշոր վերելք էր ապրում:

Այս ժամանակ Հովհաննավանքը ունեցել է մեծ կալվածքներ և եկեղեցական վիճակ, միաբանության անդամների թիվը հասնում էր 60—70-ի, այնտեղ հիմնվել է բարձր տիպի դպրոց, գրադարան, ընդօրինակվել է բազմաթիվ ձեռագրեր, գրվել են ինքնուրույն աշխատություններ և այլն:

6. 18-րդ դարում Հովհաննավանքն ապրեց իր անկման շրջանը, կորցրեց կալվածքները, եկեղեցական վիճակը, իսկ 19-րդ դարի սկզբին վանքը ամբողջովին ու լիակատար ամայության հասավ:

Հշիմատության երկրորդ մասը, էջ 59-ից մինչև 145, նվիրված է Հովհաննավանքի արձանագրություններին: Այս մասում տեղափորված են 75 վիմական արձանագրությունների ընդօրինակությունն և 80 արձանագրությունների վերծանությունը: Արձանագրությունները դասավորված են ժամանակագրական կարգով. նախ դրված են հնագույն վիմական արձանագրությունները, ապա ըստ հաջորդականության՝ նորեղություն:

Հեղինակը մեծ աշխատանք է տարել եղծված, դժվար ընթեռնելի արձանագրությունները վերծանելու ուղղությամբ: Արձանագրությունները, ըստ բովանդակության, կեսից ավելին վերաբերում են նվիրատվությանը: Առանձին իշխանական տներ վանքին են նվիրել հողեր, այգիներ, գյուղեր, ոսկիա և արծաթյա իրեր, զարդեր, եկեղեցական ըսպաններ և այլն:

Արձանագրությունների մյուս խոռնքը վերաբերում է Վաշուայանների իշխանական տան կարգադրություններին, հրամաններին՝ սեփականատիրության շուրջը, որոնք պատ-

մագիստրության համար արժեքավոր են Հայաստանի այն ժամանակի սոցիալ-տնտեսական հարաբերությունների, ներքին կյանքի հարցերը լուսաբանելու համար:

Արձանագրությունների մնացած մասը վերաբերում է շինարարական աշխատանքների նկարագրությանը:

Ինչպես հայտնի է, 12—13-րդ դարերում Զաքարյանների իշխանության շրջանում, պետական հասարակական շինարարությունը բավականաշափ ուժեղ է եղել: Սեղուկյան և պարսկա-բրյուգանդական (Հայաստանի համար) երկարատև մրցակցության հետևանքով քայլարքած Հայաստանը Զաքարյանների իշխանության շրջանում ոչ միայն վերականգնվել, այլև զարգացման նոր վերելք է ապրել:

12—13-րդ դարերում Հայաստանի պատմական կյանքը ճիշտ հասկանալու գործում Հովհաննավանքի արձանագրություններն արժեքավոր փաստական նյութ են մատակարարում:

Հովհաննավանքի արձանագրությունները ընդօրինակելու և հրատարակելու մի շարք փորձեր են եղել: Դրանցից կարելի է հիշել Հովհաննես եպ. Շահնամթամյանին, որն իր «Ստորագրություն կաթողիկե էջմիածնի և հինգ գավառացն Արարատայ> աշխատության թ. հատորում, որ լուս է տեսել 1842 թվին՝ տեղավորել է արձանագրություններ Հովհաննավանքից: Սակայն դրանք խիստ պակասավոր են և որոշ մասը ճիշտ չեն վերծանված: Այնուհետև, Ղևոնդ Վ. Ալիշանը իր «Այրարատ բնաշխարհ» Հայաստանյացց» մեծածավալ աշխատության մեջ բավականաշափ տեղ է հատկացրել Հովհաննավանքի արձանագրություններին, բայց այս արձանագրությունները նույնպես խիստ պակասավոր են:

Վերջապես, Հովհաննավանքի արձանագրություններին բավականաշափ տեղ է տրվել Կարապետ Կոստանյանցը, իր ուկիմական տարեգիր ցուցակ ժողովածույթ արձանագրությունց հայոց» աշխատության մեջ: Սակայն վերև հիշված աշխատությունների ընդհանուր պակասատիրությունը՝ տեղ է դուել այս տեղ և այս:

Գիտությունների թեկնածու Ղաֆադարյանը
քննադատաբար է վերաբերվել վերև հիշված
հեղինակների կողմից հավաքված ու վեր-
ծանված արձանագրություններին, նա ա-
ռաջին անգամ հրատարակել է բազմաթիվ
նոր արձանագրություններ: Ճարտարապետա-
կան և պատմական մեծարժեք հուշարձան-
ների շարքից լույս տեսած «Հովհաննավանիքը
և նրա արձանագրությունները» խորագրով
ներկա աշխատությունը նոր լույս է սփռում

Հայ ժողովողի պատմության և նրա կուտու-
րայի առանձին ճյուղերի (քանդակագործա-
կան արվեստ, ճարտարապետություն, ման-
րանկարչություն, փայտի փորագրություն)
զարգացման վերաբերյալ:

Պատմական գիտությունների թեկնածու Կ.
Ղաֆադարյանի տվյալ աշխատությունը նոր
և արժեքավոր մուծում է հայագիտության
գանձարանում:

Գիտական աշխատող՝ Ս. ԱՎԱԳՅԱՆ

